

Հ ճ ժ Կ
Գ ծ ի Կ Ը Ռ Ո Ւ Յ Վ Ը Ծ Ք Ն Ե Ր Ի
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ը Կ Ը Ն Վ Ը Ր Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՐԱՀԱՆԳ

ԱՎՏՈԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԱԳՈՆՆԵՐԻ ԶՆՆԻՉԻՆ, ԳՆԱՑԻ ՅՈՒՂԻՉԻՆ
ՅԵՎ ԳՆԱՑԻ ՊԵՏԻՆ

656.2
2-99

ԱՆԳՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹԳԾԻ ՎԸՐԶՈՒԹՅՈՒՆ

14.06.2017

24 SEP 2010

656.9

2-99

ՀԱԺԿ

ՎԱԳՈՆԱՅԻՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԱՎՏԱՐԱԳԵԼԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԱԳՈՆՆԵՐԻ ԶՆՆԻԶԻՆ, ԳՆԱՑՔԻ
ՅՈՒՂԻԶԻՆ ՅԵՎ ԳՆԱՑՔԻ ՊԵՏՈՆ

Վ	Ներկա հրահանգը պետք է մացվի «Յեր- կաթուղային գործակալներին ձեռնարկ- ներով մատակարարման կանոններում» (ԲԲ. 0/198) ըստ կարգի № 640 համարի տակ:
613	

ԼՇՁԿ-2 ՏՇՁԱ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՆԵՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1935

Քարգմանիչ՝ ՅԵԴԻԳԱՐՅԱՆ
Խմբագիր՝ ՍԱՐԳՍՅԱՆ
Թողարկիչ՝ ՄԻՐԿՈՎԻՉ

**ԱՊՐԱՆՔԱՏԱՐ ԳՆԱՅՔՆԵՐԻ ԼՐԻՎ ԱՎՏՈՒՐ-
ԳԵԼԱԿՄԱՆ ՓՈԽԱԳԻՆԸՈՒ ՄԱՍԻՆ**

Հրաման Հաղորդակցության նանապարհների ժողովրդական կոմիտարի 1935 թ. 8 հուլիսի № 172/ց.

1.

Չնայած նրան, լուր ՀԾԺԿ-ի պարկուժ գտնվող վագոնների ընդհանուր քանակից ավտոարգելակային սարքերով սարքավորված և 31 տոկոսը և մնացած վագոնների ճնշող մեծամասնությունը սարքավորված և միջանցիկ փողերով, ավտոարգելակումը մինչև հիմա չի մտցրած, իսկ սարքված ավտոարգելակները դանդաղում են անթույլատրելի խախտված դրություն մեջ, նրանցից շատերը գողացված են: Միանգամայն անբավարար և դրված ավտոարգելակների նորոգումը և գնացքների պատրաստումն ուղարկման համար, նորոգման գծերի սնուցումը խտացրած ողով չեն կազմակերպված, հրամանատարական կազմը չեն ուսումնասիրել արգելակային գործը և չեն ղեկավարում նրան. արգելակների վորակյալ բանվորական ուժի մեծ հասունություն կա. անհրաժեշտ պայքար չի մղվում սխառնատիկ բնույթ կրող հավիտակումների և ավտոարգելակային սարքավորման փչացման դեմ:

Այդպիսի դրությունը հետագայում անհանդուրժելի համարելով և հաշվի առնելով ապրանքատար

սլարկի լրիվ ավտոարգելական փոխադրելու բացառիկ նշանակութունը—վազոնների շրջանառությունն արագացնելու, յերթնեկության անվտանգությունը բարձրացնելու և յերկաթուղիների աշխատանքի ընդհանուր լավացման համար—հրամայում եմ.

Յերկաթուղիների պետերին՝ ապրանքատար գընացքները փոխադրել լրիվ ավտոմատիկ արգելակման յերկաթուղիների ամբողջ ցանցում վոչ ուշ, քան 1935 թվի նոյեմբերի 1-ը:

Սահմանել գնացքների լրիվ ավտոարգելական փոխադրման հետեյալ կարգը և հերթականությունը.

1. 1935 թվի ոգոստոսի 1-ից բոլոր ուղարկվող մարշրուտները հետեյալ յերկաթուղիներով և ուղղություններով.

ա) Դոնեցի հարավային և Մ-Կուրսկի կարմիր Լիման—Մոսկվա—Կուրսկի միջով ուղղությամբ.

բ) Դոնեցի, Հարավային, Արևմտյան, Մ. Բ. Բ. և Հոկտեմբերյան կարմիր Լիման—Լենինգրադ (Լիմանի, Վորոժբայի և Լգովի միջով).

գ) Յեկատերինսկի և Դոնեցի — Կրիվորոժի — Դնեպրոպետրովսկ—Դոնբաս.

դ) Հարավային Ուրալսկի, Ոմսկի, Տոմսկի—Մագնիտոգորսկ—Կուլբաս և Մագնիտոգորսկ—Կարագանդա (Պետրոպավլովսկի, Ոմսկի, Եյսևեյի միջով).

յե) Անդրկովկասյան—Բագու—Բաթում.

զ) Հյուս. Կովկասյան և Ազով-Սևծովյան—Մախաչկալա—Գրոզնի, Գրոզնի—Արմավիր—Տուապս և Գրոզնի—Նովոռոսիսկ կավկազսկայայի միջով:

2. 1935 թվի ոգոստոսի 15-ից բոլոր ուղարկվող մարշրուտները հետեյալ յերկաթուղիներով և ուղղություններով.

ա) Հյուսիս. Կովկասյան, Ազով-Սևծովյան, Հարավ-Արևելյան և Մ-Կարգանի—Գրոզնի — Բատայսկ—Մոսկվա (Լիխայա, Կոչետովկայի միջով).

բ) Կիրովի—Կիրովսկ—Մուրմանսկ.

գ) Դոնեցի և Յեկատերինսկի—Դոնբաս—Զնամենկա (Պլատինսարկայի միջով).

դ) Միջին-Ասիական Կրասնովոդսկից սկսած յերկաթուղու սահմաններում.

յե) Ռյազանո-Ուրալսկի, Մ-Կարգանի և Մ-Կուրսկի-Նավթի և ձկան մարշրուտները Սարատովից Մոսկվա (Կոչետովկայի միջով).

զ) Անդրկովկասյան յերկաթուղիների բոլոր գընացքները բացառությամբ հավաքականների և տնտեսականների:

3. Սեպտեմբերի 1-ից բոլոր գնացքները բացի հավաքականների և տնտեսականների, հետեյալ յերկաթուղիներով և ուղղություններով.

ա) Դոնեցի, Յեկատերինսկի, Հարավային, Կուրսկի, Հար.-Արևմտյան, Արևմտյան, Մ.-Բ.-Բ. Հոկտեմբերյան, Հար.-Արևելյան և Ազով-Սևծովյան Դոնբասից զեպի Մոսկվա, Լենինգրադ, Մարիուպոլ, Սարևոլ, Ստալինգրադ, Ռոստով, Զնամենկա, Դարնիցա.

բ) Դոնեցի, Յեկատերինսկի-Կրիվորոժի, Դնեպրոպետրովսկ, Դոնբաս,

գ) Մարշրուտային գնացքները հետեյալ ուղղություններով. Կիրովո—Չվանկա (Կիրովյան յերկաթուղիներ), Րիբինսկ—Լենինգրադ (Հոկտեմբերյան յերկաթուղիներով).

դ) Պերմսկի, Հյուսիսային, Հոկտեմբերյան, Պերմի և Լենինգրադի շրջաններից—որեկան յերկու գնացք:

4. 1935 թվի հոկտեմբերի 1-ից.

ա) Բոլոր գնացքները, բացառությամբ հավաքականների և տնտեսականների հետևյալ ուղղություներով. Ուրալո—կուզբաս Հար.—Ուրալսկի, Պերմսկի, Ոմսկի և Տոմսկի յերկաթուղիներով.

բ) Ուստուրիսկի յերկաթուղիներից բոլոր դուրս յեկող գնացքները, բացի հավաքականներից.

գ) Հյուսիսային բոլոր մարշրուտային գնացքները Պրեսնսկի շրջանից Մոսկվա.

դ) Որեկան վեց գնացքներ Դոնբասից Բատրակի Լիսկի—Բադաշովի միջով Հարավ-Արևելյան, Դոնեցի, Մոսկվա—Դոմբաս, Բյադանո—Ուրալսկի և Մ-կազանի յերկաթուղիներով:

5. Նոյեմբերի 1-ից բոլոր ապրանքատար գնացքները յերկաթուղիների ցանցով բացառությամբ տնտեսականների:

6. Ցուցված ուղղություների մնացած ուղիղ գնացքներում բոլոր յերկաթուղիներում ոգոստոսի 1-ից գնացքի զլխի ավտոարգելակային մասի յերկարությունը, այսինքն արգելակավոր և միջանցիկ վագոնների, պետք է լինի կազմի 30 տոկոսից վոչ պակաս, սեպտեմբերի 1-ից կազմի 50 տոկոսից վոչ պակաս և հոկտեմբերի 1-ից կազմի 75 տոկոսից վոչ պակաս:

II

Ապրանքատար գնացքներն անընդհատ ավտոարգելակման դրեկն ապահովելու համար, յերկաթուղիների պետերի անձնական պատասխանատվությամբ, ինչպես նաև վագոնային, շոգեքարշային, շահագործ-

ման սպասարկումների և վագոնանորոգման գործա-րանների պետերի անձնական պատասխանատվությամբ անցկացնել հետևյալ միջոցառումները:

7. Վերջացնել բոլոր վագոնների սարքավորումը միջանցիկ փողերով մինչև ս. թ. 1 սեպտեմբերի և նույն թվից արգելել յերկաթուղուց յերկաթուղուն ավտոարգելակներով, կամ միջանցիկ փողերով չսարքավորված վագոնների անցթողները: Բոլոր արգելա-կավոր և միջանցիկ վագոնների վրա կախել պակասող ռետինե բազովները վոչ ուշ, քան ս. թ. 25 հոկտեմբերի ապահովելով փողերում աղատ անցման մանրակրկիտ ստուգումը, նրանց խտությունը, ամրացումը վագոնին և ծայրի կտրվածքների ամբողջությունը:

8. Շոգեքարշների սառը վաղուցների ժամանակ կադմակերպել ավտոարգելակների և ողային նասոսների ստուգումը և փորձարկումն ապրանքատար պարկի բոլոր գնացքային շոգեքարշների վրա, վերացնելով այն մինչև ս. թ. 15 ոգոստոսը:

9. Նորոգման կետերում, դեպոներում և գործա-րաններում վագոնների ամեն տեսակ նորոգության դեպքում լրիվ սարքինության բերել արգելակային ցարքավորումը և առանձնապես ոգացույցային ցանցը: Ցերկաթուղիների պետերին ս. թ. ոգոստոսի 15-ից ապահովել յուրաքանչյուր նորոգման կետի գծերը խտացրած ոգով լրիվ մատակարարելը, անհրաժեշտ դեպքերում ոգաագործելով շոգեքարշները և ապահով-ման յեղանակը հաղորդել մինչև ս. թ. ոգոստոսի 1-ը Ցվ-ին, իսկ շոգեքարշներն ոգաագործելու դեպքում—Ցվ-ին և ՑՏ-ին:

Առ 1-ն ոգոստոսի բոլոր շոգեքարշային և վագո-
նային տեղամասերում և նորոգման գործարաններում
կազմակերպել զուտ ավտոմատային շարժնատանոցներ,
սեղաններով սարքերի փորձարկման համար և հատուկ
գործերով:

10. Ավտոարգելակների նորոգման և զնացքներն
ուղղորկման պատրաստելու արտադրական բազայի ու-
ժեղացման համար, յերկաթուղիների պետերի ս. թ.
3-րդ կվարտալում ապահովել շինաբարոյւթյան վեր-
ջացնելը, հարգարումը և հետևյալ ավտոարգելակային
վերահսկիչ կետերի գործարկումը:

Դոնեցի յերկաթուղիներ—Կուլյանսկ, Ռոգաչո-
վո Յեկատերինո. Անդրկովկասյան—Դյանչա, Լենի-
նական, Հյուսիսային-Կովկասյան—Մախաչ-Կալա, Դե-
րենդ, Հանքային ջրեր. Ազով-Սևծովյան—Տիխոբեցկա-
յա, Կամենոդոնյա. Հորավ-Արևելյան—Լիսկի, Պովո-
րինո, Գրյազի: Հարավ-Արևմտյան—Կազատին, Դար-
նիցա, Պոմոչնայա. Հարավային Չոգովայա-Ոսնովա.
Մոսկվա—Դոնբաս—Յելեց, Ուզլովայա, Վալուկի. Ա-
րևմտյան Վորոբժա, Բրյանսկ, Ժյոբին, Բելոր—Բալ-
տիյսկի—Սմոլենսկ, Որշա, Վյազմա, Մոսկվա—ապր.
Պոդոմսկոյնայա Մ.—Կազանի—Մոսկվա-տեսակավ Բրի-
նայա, Ագրից, Մուսոմ Ա.—Կուրսկայա-Ոժերելյե, Գոր-
կի Կիրովսկի-Կեմ, Կիրովսկ. Հոկտեմբերյան—Դնո.
Հյուսիսային—Մոսկվա—Բուտիրսկայա, Իվանովո-Ջա-
րայսկի—Վ.—Ուդինսկ, Յերոֆեյ Պավլովիչ, Ոմսկի
Պետրոպավլովսկ, Կարականդա, Բատուրինսկ, Պերմա-
կի, Ն.—Տագիլ, Գորոբլադոդատսկայա, Ուսոլովի, Յա-
նաու, Տոմսկի, Նովո-Կուզնեցկ Եյսև, Տայգա Արևել.
Սիբիրի Նիժնե-Ուդինսկ, Ուսսուրսկի—Բոչկատյովո,

Սկովոյադինո, Նիկոլսկ—Ուսսուրիսկ, Սուգան, Խաբա-
րովսկ, Հարավային Ուրալսկի—Կուրգան, Բերդյաուշ,
Ռյազանո-Ուրալսկի, Հաշտարխան, Սամայո—Ջլատո-
ռաստովսկայա—Դեմա, Թուրքսիբ—Սեմպալատինսկ:

Բոլոր ավտովերահսկիչ կետերը մատակարարել
կելեարական ուժով, բացառությամբ հետևյալ կե-
տերի՝ Դերբենդ, Մախաչ-Կալա, Սմոլենսկ, Վորոբժա,
Բատուրինսկ, Կուրգան, Պոմոչնայա, Բերդյաուշ, Կեմ,
Բոչկաբյովա և Սկովորոդինո, վորոնք ապահովել կոմ-
պրեսորներով և ներքին այրման շարժիչներով:

Բացի դրանից, ս. թ. 4-րդ կվարտալում կառու-
ցել և շահագործման դնել վերահսկիչ կետեր՝ Նիկի-
տովկա, Ուննչա, Տուլա, Բալաշով, Ոսիշչովո, Իսախո-
գորկա, Բելոբեչենսկայա, Կեմերովսկ, Ստալինգրադ և
Կարտալի կայարաններում:

11. Յերկաթուղիների պետերին, հատկացրած
վարկերի հաշվին ստորև լիմիտային աշխատանքների
համար, ապահովել անհրաժեշտ աշխատանքների անց-
կացնելը գործող վերահսկիչ կետերի ուժեղացման և
նորոգման գծերի խտացրած ողով մատակարարման
լավացման համար:

12. Յերկաթուղիների և մատակարարման բա-
ժինների պետերին՝ զազային խողովակների համար
2-րդ և 3-րդ կվարտալների առանձնացրած ֆոնդերից,
նրանց նշանակումից անկախ, առաջին հերթին և լը-
րիվ կերպով ապահովել պահանջը, վագոնները միջան-
ցիկ փոխելով լրացուցիչ կերպով սարքավորելու և ավ-
տոարգելակային վերահսկիչ կետերի և վագոնային
տեղամասերի նորոգման գծերի խտացրած ողակ մա-
տակարարելու համար:

13. Սաժերից, Մոժերից, Եքսպերմենտալնի, Կալուսկի և Կարմիր գծի գործարանների պետերին: Վազոնային կառավարչություն կարգադրություններով հանձնել:

ա) Կոմպլեկտային բազուկային միացումներ կուսելի թուղից հետոյալ քանակություններով:

Ախտներ	Մշակմամբ	Առանց մշակմամբ
Հուլիսին	20.000	12.000
Ոգոստոսին	31.000	11.000
Սեպտեմբերին	40.000	13.000
Հոկտեմբերին	44.500	13.500
Նոյեմբերին և դեկտեմբերին	55.000-ական	—
Ընդամենը	245.500	49.500

բ) Լծակային փոխադրությունների մշակված գլանիկների 330.000 հ. մինչև 1-ն հոկտեմբերը և 200.000 հ. մինչև 1935 թ. դեկտեմբերի 1-ը:

գ) ՑՄՏ-ին անմիջապես սկսել իրենց գործարաններում արգելակային պահեստի մասերի պատրաստելը և 1935 թվի ընթացքում հանձնել վազոնային կառավարչության կարգադրություններով վոչ պակաս, քան 15.000 ծայրի ծորակներ, 15.000 բացթողի կափարիչներ 5.000 «կ» սերիայի բաշխիչի ներքին մասեր, 30.000 կափարիչներ Մատրոսովի արգելակի թևերից բացթողի:

14. Առանձնացնել գազային մատնաշափային խողովակներ, միջանցիկ վազոնների վրա կախելու համար ՅՎ-ի կարգադրով՝ հուլիսին 500 խ. և ոգոստոսին 500 խ. ՀՃԺԿ-ի ներքին ֆոնդերի հաշվին:

15. Առանձնացնել լրացուցիչ կերպով վազոնային տնտեսությանը կապիտալ ներդրումներով ապրանքատար պարկը լրիվ ավտոարգելակման փոխադրման աշխատանքների անցկացման համար 10 վերահսկիչ կետերի կառուցման համար—700 հազար ուրբլի և կենտրոնացրած պատվերների ծախսերի համար՝ 1.700 հազար ուրբլի:

16. Յերկաթուղիների պետերին վերանայել նորոգման և արգելակների սպասարկման բանվորների առկայությունը յուրաքանչյուր վազոնային տեղամասում առանձին և նրանց կազմը կոմպլեկտավորել իսկական պահանջի սահմաններում Յ-ը կվարտալի համար բաց թողած կոնտրոլներին հաշվին:

17. Ավտոարգելակների վորակյալ կազերով սպասարկելու համար Ցոպկադրին, ՅՎ-ին և յերկաթուղիների պետերին ապահովել ընթացիկ տարում սովորեցնելու 19.000 գնացքային յուղիչների, նրանց վերավորակավորելով յուղիչ-ավտոմատիկների, Ցոպկադր ընկ. Չյորնիին յուղիչների պատրաստման ծախսերի համար հատկացնել 20.000 ուրբլի:

Յերկաթուղիներում անցկացնել ամսական կուրսեր արգելակների նորոգման շոգեքարշային գեպոնեքի բրիգադիներին, դաստիարակ մեքենավարների և ավտոարգելակների հրահանգիչների վորակավորման բարձրացման համար:

Սովորեցնել մինչև ս. թ. սեպտեմբերի 15-ն առանց արտադրությունից կտրելու կազմիչներին, կցիչներին և կոնդուկտորներին, ավտոարգելակներին վերաբերվելուն բազուկների կցման մասում, նրանց կախմանը, ծայրի և ստոպ-ծորակների կոթերի հետ վարվելուն,

գրա համար աշխատանքի ներգրավելով վագոնային սպասարկումների տեխնիկական անձնակազմը:

Կայարանների պետերին, վագոնային տեղամասերի ներկայացուցիչներին հետ միասին, մինչև 1 հոկտեմբերի ստուգել այդ աշխատողների պատրաստումը:

Պարտավորեցնել սպասարկումների և տեղամասերի վարչատեխնիկական անձնակազմին ուսումնասիրել ավտոարգելակային գործը և քննության հանձնել տեխմինիմումի ծավալով մինչև ս. թ. 1 հոկտեմբերը:

Սահմանել, վոր վագոնային և շոգեքարշային անգամասերի պետերը, նրանց տեղակալները, վարպետները, տեխնոլոգիայի աշխատողները և վերաստուգիչները, վորոնք մինչև ս. թ. 1 հոկտեմբերը քննություն չեն հանձնել ավտոարգելակների վերաբերյալ, չեն կարող վարել իրենց պաշտոնները:

Ապահովել զծային և տեխնիկական անձնակազմին ավտոարգելակային գործին սովորեցնելը Մոսկվայի նենտրոնական կուրսերում. մինչև տարվա վերջը մնացած ժամանակում—վագոնայիններ—150 մ. և շոգեքարշայիններ—200 մ.:

18. Ավտոարգելակներին սովորեցրած կադրերը պահելու համար, արգելել այդ աշխատողների տեղափոխումն ուրիշ պաշտոնների, վորոնք կապված չեն ավտոարգելակների սպասարկման հետ:

19. Գծային աշխատողներին հրահանգումն ավտոարգելակների վերաբերյալ լավացնելու համար յուրաքանչյուր յերկաթուղու վագոնային սպասարկմանը սարքավորել հրահանգող արգելակավոր վագոն:

20. Ավտոարգելակների նորոգման և սպասարկման վորակյալ կադրերի ընտրման և պահման նպա-

տակով՝ ա) բարձրացնել վագոնային փականագործ ավտոմատիչիկների վճարման դրույքները միջին հաշվով 20 տոկոսով, չհաշվելով հատուկ սահմանված հավելումները, և բ) յուղիչ-ավտոմատիչիկների վճարումը, վորոնք քննությունը հանձնել են, 170 ուրլու փոխաբեն սահմանել ամսական 200 ուրլու, չհաշվելով հատուկ սահմանված հավելումները:

21. Մացնել ավտոարգելակների աշխատողների պարգևատրում, ավտոարգելակների սարքավորման և նորոգման պլանի կատարման և գերակատարման համար և գնացքներում արգելակների սարքին գործելու համար:

ՅՎ-ին մինչև ս. թ. 15 հուլիսի յերկաթուղիներին ուղարկել կանոնագրություն պարգևատրման մասին:

22. ՅՎ-ին ընկ. Ոստրովսկուն, ՅՏ-ին ընկ. Կուրիցինի և Տրանսբյրկաթհրատ—ընկ. Պոպովին մշակել և հրատարակել մինչև ս. թ. 1 ոգոստոսի հրահանգ ավտոարգելակների սպասարկման և նորոգման վերաբերյալ. շոգեքարշային մեքենավարին և նրա ոգնականին, ուղեկցողին, կոնդուկտորին, յուղիչ-ավտոմատիչիկին և յուղիչին, գնացքի պետին:

23. Այն կապակցությամբ, վոր լրիվ ավտոարգելակման փոխադրվելու գործում բացառիկ նշանակություն ունի գնացքների ճիշտ կազմելը, իսկ յերկաթուղիների մեծամասնության մեջ մինչև հիմա այդ բնագավառում բացակայում և ելեմենտար կարգապահությունը — գնացքները, վորոնք անկանոն կերպով ընտրված ավտոարգելակավոր և միջանցիկ վագոններով են կազմած մեկ յերկաթուղուց մյուսին փոխա-

դրելիս համարել անկանոն կազմված և ս. թ. ոգոստոսի 15-ից խոտանման յենթակա:

ՅԴ-ի և ՅՎ-ի 1934 թ. 10-ն ապրիլի № 6614 հեռագիրը, վորը թույլ եր տալիս միջանցիկ վագոնները չընտրել—վերացնել: Ապրանքատար գնացքներն ավտոարգելակներով ուղարկելիս շոգեքաղնները մատուցել կետերում, վորոնք ունեն կայարանային կոմպրեսորային սարքավորումներ և ոգատար ցանց, 10 րոպե առաջ, իսկ կայարանային ցանց չունեցող կետերում—ուղարկելուց 20 րոպե առաջ:

24. Այն կապակցութեամբ, վոր բաղուկների հափըշտակման և բաղուկների ու ուրիշ արգելակային մասերի փչացման դեմ յերկաթուղիներում հարկ յեղած պայքար չե մղվում, իսկ այդ հափշտակումները ձախողում են լրիվ ավտոարգելակման անցնելուն, յերկաթուղիների պետերին և քաղաքաժիններին կաղմակերպել վճռական պայքար այդ հափշտակումների դեմ, վորպես ֆուսարարական ակտերի և խորտակումներ կաղմակերպելու դեմ, անմիջապես մեղավորներին դատական պատասխանատվութեան յենթարկելով:

25. Յերկաթուղիները սխտեմատիկորեն հրահանգելու համար լրիվ ավտոարգելակման փոխադրման և ներկա հրամանի կատարման վերահսկման համար սահմանել ժամանակավորապես մինչև նոյեմբերի 1-ը ՅՎ-ին կից ավտոարգելակումների տեսուչ-հրահանգիչների հատուկ խմբակ 10 հոգուց բաղկացած:

26. Ներկա հրամանի կենսագործման համար անձնական պատասխանատվութեանը դրվում և վագոնային սպասարկումների պետերի վրա:

Յերկաթուղիների պետերին ստուգել լրիվ ավտոարգելակման փոխադրելու աշխատանքի ընթացքը և ամեն ամիս զեկուցել ինձ իր ստորագրութեամբ աշխատանքի ընթացքի մասին:


III

Պարզում եմ, վոր ներկա ավտոարգելակային տնտեսութեան միանգամայն անբավարար դրութիւնը պատահական չե և վոր նա հետևանք ե յերկաթուղիների կողմից միանգամայն արհամարհական վերաբերմունք դեպի վագոնային տնտեսութիւնը: Յերկաթուղիները դեռ ևս յելնում են նրանից, վոր վագոնները նրանց չեն պատկանում, ուստի չեն զբաղվում վագոնների նորոգութեամբ, փաստորեն թույլ տալով նրանց քայքայումն:

Յերկաթուղիների պետերից պահանջում եմ ներկա հրամանի լրիվ և ճշտորեն կատարումն ավտոարգելակման մասին և իր վագոնային ամբողջ տնտեսութեան արմատական լավացումը:

Հաղորդակցութեան ձանապարհների
Ժաղովրդական կոմիսար՝ Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

4078. $\frac{1009}{38954}$



Университетский архив

Հաղորդագրության ձևա-
պարհների ժողովրդական կո-
միտարի հանձնարարութեամբ
հաստատում եմ. վազոճային
տնտեսութեան կենտրոնական
կառավարչութեան պետ՝

Մ. Գ. ՈՍՏՐՈՎՍԿԻ

31-ն հուլիսի 1935 թ.

ՀՐԱՀԱՆԳ ԱՎՏՈԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱԳՈՆՆԵՐԻ ԶՆՆԻՉԻՆ, ԳՆԱՑԲԻ ՅՈՒՂԻՉԻՆ ՅԵՎ ԳՆԱՑԲԻ ՊԵՏԻՆ


(«Ավտոմատիկ արգելակները մարդատար և տպ-
քանքատար գնացքներում պահման և դորձադրման»
վերացումով (բր. տ/273 1930 թ.) վագոնների զննիչի
հրահանգի (հավելված 2), գնացքի յուղիչի (հավելված
3) և ավտոարգելակները գնացքների հետ պատահա-
րներից հետո զննելու կարգի մասին հրահանգի մասում
(հավելված 7)).

1. ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ԶՆՆԵԼԸ ՅԵՎ ԴՈՐԺՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱ- ՄԱՐ ՊԵՏՐԵՍՅԱՆԸ ԳՆԱՑԲԸ ԿԵՐՄԵԼՈՒՅ ՀԵՏՈ

Արգելակների զննութեանը կատարում և վազոն-
ների զննիչը, իսկ արգելակների պատրաստումը դոր-
ժողութեան համար, փականագործների բրիգադը զննի-
չի ղեկավարութեան տակ և նրա պատասխանատու-
թեամբ. միջանկյալ կայարաններում, վորտեղ զննիչ-

ներ չկան, այդ աշխատանքը կատարում և գնացքի և կայարանի յուզիչը:


Ապրանքատար և մարդատար գնացքի սկզբնական ուղաբեկման, կամ կաղմեկու կայարաններում նրա



Նկ. 1. Մայրի ծորակը փակ և բազուկը կախ-
ցի վրա յի:

կաղմեկուց հետո, մինչև գնացքի շոգեքարշ կցելը, պետք և կատարվեն արգելակների գննուկթյունը և պատրաստումը գործողության համար:

Արգելակները գննելիս և պատրաստելիս անհրա-
ժեշտ է.




Նկ. 2. Անկանոն դրուկումն — բազուկը բռնակի յետև
անցկացնելիս կոտրված է:

§ 1. Վերջին վագոնի ողացույց խողովակի յետևի ծայրի ծորակը փակել: Ցետևի միացնող բազուկը կա-
խել կախոցի, կամ խլատարի վրա (նկար 1): Միաց-
նող բազուկը չկախված թողնել, կամ բռնակի յետևն
անցկացնելիս կոտրելն արգելվում է (նկար 2):

§ 2. Բոլոր միացնող բազուկները կանոնավոր
կցել (նկար 3), վորի համար բազուկները կցելուց ա-

առջ գննել նրանց գլխիկները, մաքրելով նրանց ցի-
խից և կեղտից, անսարք խտացնող ողակները փոխա-
րինել, իսկ նրանց բացակայության պեպքում դնել
նորերը և միացնելով գլխիկները պատել մինչև դեմ
առնելը:



Նկ. 3. Բազուկների կանոնավոր կցումը:

§ 3. Բազուկների միացումները կատարել գոնյա
մեկ մոտքաշով վազոնների կցելուց հետո միայն, իսկ
յերբ վազոնները սարքավորված են ավտոկցումով,—
միայն յերկու վազոնների ավտոկցումների գլխիկներին
կցման դեպքում:

§ 4. Բանալ բոլոր ծայրի ծորակները, բռնակը
խողովակի յերկարությամբ դնելով, ըստ վորում ուղ-

ղահայաց գծիկը (նիսկով ծորակի խցանի քառակուսու
վրա պետք է լինի բռնակի յերկարությամբ):


§ 5. Բանալ գլխավոր մագիստրալից դեպի ողա-
բաշխիչները տանող անջատող ծորակները: Անջատող
ծորակների բռնակները դնել խողովակի յերկարու-
թյամբ (նկար 4): Մարդատար դնացքի արագ գործող
յնուակի կափարիչների փոխարինող խցանի բռնակը
դնել դեպի ցած կախված (նկար 6):

Ծանաթություն. — Արգելակներն ողի տակ
ստուգելիս հատուկ ուշադրություն դարձնել բաշ-
խիչներին, վորոնք մինչև դնելն անջատված են
յեղել, ի նկատի ունենալով, վոր դա կարող եր
կատարված լինել նրանց անսարքինության
պատճառով:

§ 6. Ապրանքատար դնացքում ունիվերսալ կեր-
պով կատարելագործված յնուակի կափարիչի ռեծիմա-
յին խցանի բռնակը դնել ապրանքատար ռեծիմի. թե-
քել դեպի արգելակային գլանի կողմը, իսկ մարդա-
տար դնացքում—արգելակային գլանից թեքել մյուս
կողմը:

§ 7. Մատրոսովի ողաքաշխիչի ռեծիմային նե-
ցուկը բեռնած վազոնի ժամանակ դնել բեռնած ռեծի-
մի (նկար 7), իսկ դատարկ վազոնի ժամանակ—դա-
տարկ ռեծիմի (նկ. 8):


Ծանոթություն. — Ժամանակավորապես բո-
լոր 2 և 4 սոնանի 14 մատնաչափանոց ար-
գելակային գլաններով վազոնների վրա ռեծիմա-
յին նեցուկը պետք է ամրացրած լինի ուղղող
բուլթերով դատարկ ռեծիմի:



Նկ. 4. Արգելակի միացումը և (ողաբաշխիչներ
„ԱԳ-1“, „Կ“ և „Մ“):

10 մատնաշափանոց արգելակային զլաններով 4 սոնանի վազոնների վրա ուժիմային նեցուկը պետք է դրված լինի բեռնած ուժիմի:

§ 8. Արգելակելուց ստուգել ձեռքի արգելակների գործողությունը: Արգելակված դուրսյալ բոլոր կոճղերը պետք է քիփ սեղմած լինեն աշխարհին, իսկ ազատ ուղղությամբ մնացորդը ձեռքի արգելակների վիճակներում պետք է 875 միլլիմետրից պակաս չլինի (նկ. 9):




Նկ. 5. Արգելակի անջատումը և (ողաբաշխիչներ
„ԱԳ-1“, „Կ“ և „Մ“):

§ 9. Ձեռքի արգելակները նրանց սարքի բերելուց և գործողության ստուգելուց հետո պետք է արձակված լինեն մինչև մերժումը:

§ 10. 30 միլլիմետրից բարակ արգելակային կոճղերն արգելակային սանդղակներին բոլորով ամրացնելիս և 12 միլլիմետրից բարակ կոճղերը հուլիսով ամ-

բացնելիս—պետք է փոխարինվեն: Կոճղերը չպետք է դուրս դան բանդաժների դրսի յեղերքից (նկ. 10):



Նկ. 6. Աբազ գործող յնակի կափարիչի բռնակի դրութունը:


Արգելակային կոճղերը պետք է անիմներից շրջանով հեռանան հավասարաչափ (նկ. 11):

Կոճղի վերին և ցածի ծայրերում աարբեր աբանքներ չեն թույլատրվում (նկ. 12):

§ 11. Արգելակային կոճղերը բոլորեով ամրացնելիս յերկու բոլորերից, վորոնք ամրացնում են կողճը, յուրաքանչյուրը պետք է ունենա պտուտմեր հակապտուտմերով, կամ պտուտմեր շալինտով (նկ. 13):

§ 12. Այն դեպքում յերբ արգելակային կոճղերն

անիմներից 20 միլլիմետրից ավել է հեռանում, ձգել նրանց գլանիկները տեղափոխելով քարշերի, պրկանների, բաշխիչ շերտի և մեռած կետերի բարձակների պաշարի անցքերը (նկ. 14):




Նկ. 7. Մատրոսովի ոգարաշխիչը դրված է բեռնած ուժիմի:

Մարդատար վագոնների կոճղերի դրության ուղղութիւնը կատարվում է նույնպես ձգիչ մուֆտաների վորոքելով (նկ. 15) և ծայրի քարշերի պտուտմերի ձգելով:

§ 13. Ստուգել լծակային փոխադրության դրութիւնը.

ա) Բոլոր գլանիկները պետք է տեղում լինեն և համապատասխան չափի:




Նկ. 8. Մատրոսովի ոգաբաշխիչը դրված է դատարկ ռեժիմի:

բ) Գլանիկները պետք է ունենան մեջդիր և շալիճ, կամ ճուշկի, ներքնից հեռացրած դեպի կողմերը: Յեթն գլանիկը տեղավորված է ուղղահայաց, այդ դեպքում գլխիկը պետք է վերևից լինի, իսկ յերբ տեղավորված է հորիզոնական ուղղությամբ—գլխիկով վազոնի ներսը պետք է լինի:


գ) Նախապահպանող ճանկերը պետք է տեղում լինեն և լինող ամրացրած. լծակները և քարշերը, ազատ կախված և արգելակի աշխատելու ժամանակ չը պետք է դիպչեն վազոնի ուրիշ մասերին:

§ 14. Ստուգել բացթողի (արձակող) կափարիչ-



Նկ. 9. Ձեռքի արգելակն արգելված դրու-
թյամբ Ռեդլայի պաշարը 75 մմ:

ների աշխատանքը (նկար 16), բռնակը (1) պետք է ազատ ման գա և մետաղալարը (2) (поведок) ունե-
նա դեպի շվիլերտ վազոնի յերկու կողմերի վրա:




Նկ. 1'. Կոճղը շուրս և գալիս բանդի
դրսի յեղերից:

Բացի դրանից մարդատար վագոններում բացթողի կափարիչների ուժտարի աշխատանքը ստուգվում է հենց վագոնի միջից (նկար 17):

§ 15. Ստուգել արդյո՞ք բոլոր վագոնային արգելակային ստուպ-ծորակները փակած և պլոմբած են (նկար 18):

Ծանոթություն.—Ըստ §§ 14 և 15 ստուգումը պետք է կատարել գտման պարկերում:


§ 16. Ստուգել չի՞ անցել արդյո՞ք ավտոմատիկ արգելակների տարեկան զննության ժամանակը, իսկ մարդատար վագոններում և արգելակների վեցամսյա



Նկ. 11. Կոճղի կտնոնավոր դրույթունը
—անիվից հեռանում և հավասարաչափ:


վերաստուգումը: Պարբերական զննության տրաֆարետը—գտնվում է արգելագային գլանի վրա (նկ. 19), իսկ վերաստուգման տրաֆարետը պաշարի ռեզերվարի վրա:

Արգելակների զննության և վերաստուգման առաջադեպի բացակայության դեպքում վագոնը համարվում է կետանցված զննումով և վերաստուգումով:



Նկ. 12. Կոճղի անկանոն դրությունը, անխից անհավասարաչափ հեռանալով:

Արգելակների կետանցված պարբերական զննությունը դատարկ ապրանքատար վագոնները վերանորոգման գծեր ունեցող կազմելու կայարաններում կազմից հանվում են և հիվանդ վագոնների շարքն են




Նկ. 13. Կոճղի բուլտային ամրացումը սանդալի հետ:

անցնում: Մյուս կայարաններում, վերոնք վերանորոգման գծեր չունեն, այդպիսի վագոններն անց են թողնվում մինչև առաջին վերանորոգման կետը, վերտեղ պետք է կատարվի արգելակի պարբերական զննություն:


Արգելակների կետանցված պարբերական զննությունը, կամ վագոնների արգելակների վերաստուգ-

մամբ մարդատար վագոնները վերադրման կայարաններում կազմից հանվում են, իսկ մյուս կայարաններում անց են թողնվում,




Նկ. 14. Էծակային փոխադրության ուղղորդումը, գլանիկները տեղափոխելով և ծայրի բարձր ձգելով:

§ 17. Զննությունը վերջացնելուց և հայտնաբերված անսարքությունները վերացնելուց հետո զըննիչը փականագործ ավտոմատչիկների հետ միասին փորձարկման են յենթարկվում արգելակները ճնշած ոգով: Դրա համար վագոնի բազուկը միացնվում և ճնշված ոգի կայարանային ցանցի ամենամոտիկ կոլոնկային արգելակների փորձարկման համար տեղա-




Նկ. 15. Էծակային փոխադրության ուղղորդումը ձգիչ մուֆայի վրա լարելով:

փոխվող ծորակի ոգնությամբ: Ամբողջ արգելակային ցանցը լցվում է ճնշված ոգով մինչև 5 մթնոլորտի նորմալ ճնշումը:



Նկ. 16. Բացթողի կափարիչի աշխատանքի ստուգումը:


Մինչև փորձարկումն անհրաժեշտ է 2—3 բոլակ սպասել մարդատար և 7—10 բոլակ ապրանքատար գընացքում՝ արգելակային սարքերի լրիվ լիցքի համար:



Նկ. 17. Բացթողի կափարիչի մետադարը (поводок), մարդատար վագոնի ներքը:

§ 18. Զննիչը փականագործ - ավտոմատչիկների հետ միասին պետք է լսողությամբ ստուգեն և վերացնեն բոլոր անխտուժյունները միացումներում և սարքերում, վորոնք անց են կացնում ողը:

§ 19. Դրանից հետո փակվում, բացվում է կո-




Նկ. 18. Ստուպ-ծորակի փակ դրությունը:

լոնկայի վրայի անջատող ծորակը և զննիչը մանու-
մետրով ստուգում և ոգի կորուստի աստիճանը գնաց-
քի արգելակային ցանցում: Գնացքի արգելակային
ցանցի խտությունը համարվում և բավարար, յեթե
կորուստների հետեանքով նրա մեջ ճնշման իջնելը
(հաշվելով 5 մթնոլորտներից) մի բուգեյում 0,25 մթ-
նոլորտից բարձր չե: Յերբ ոգային ցանցի ընդհանուր
խտությունն անբավարար դրության մեջ և կատար-
վում և ոգանցույց խողովակի ու բոլոր միացումների
մանրակրկիտ զննություն և հայտնաբերված կորուստ-
ների վերացումն, իսկ հետո խտության փորձարկումը
կրկնվում և:

§ 20. Նրանից հետո, յերբ խտության ստուգու-
մը վերջացրած և, զննիչը վերականգնում և ճնշումը

արգելակային ցանցում մինչև 5 մթնոլորտը, բանա-
լով կոլոնկայի վրայի անջատող ծորակը:

§ 21. Զննիչն իջնցնում և ճնշումը մագիստրալի
մեջ տեղափոխվող ծորակով, 0,5—0,6 մթնոլորտի չա-
փով և փականագործ-ավտոմատչիկների հետ միատեղ
ստուգում և:



Նկ. 19 Արգելակի պարբերական զննության
արաֆարեաը:

ա) Բոլոր արգելակային կոճղերը սեղմած են աբ-
դյոք անիլներին:

բ) Ոգի կորուստներ չկա՝ աբդյոք արգելակային
զլանների խուփերում և միացումներում:

գ) Առանձին վագոնների արգելակներն աբդյոք
աղատված կերպով չեն արձակվել:

դ) Արգելակային զլանի մխոցի քելքի յերկարու-
թյունն աբդյոք նորմաների սահմաններից դուրս չե
շալիս (նկար 20):


Վիստինհուզի արգելակների համար մխոցի քել-
քը 100 միլիմետրից պակաս, 150 միլիմետրից ավել

չպետք է լինի, Կազանցիյի և Մաարոսովի արգելակների համար 75 միլիմետրից վոչ պակաս և 150 միլիմետրից վոչ ավել: Յերկարակազմ մարդատար գնացքներում միտցների քելքը սահմանվում է 120—130 մմ. սահմաններում, իսկ արգելակների փորձարկման համար մագիստրալում ճնշման իջեցնելն արվում է 0,6—0,7 մթնոլորտի չափով:

§ 22. Նշանակելով այն վագոնները, վորոնց մոտ հայտնաբերված են անսարք արգելակային սարքեր, կամ ողանցույց խողովակի կորուստներ միացնող բազուկներում և ծորակներում, զննիչն արգելակն արձակում է կոթը տեղափոխելով գնացքային դրուժյան (ճնշումը կազմի մագիստրալում նորից սահմանվում է և պահպանվում 5 մթնոլորտների մակերևույթի վրա), վորից հետո ստուգվում է, արդյոք բոլոր արգելակներն արձակել են և հեռացել են արդյոք կոճղերը անիվներից:

Արգելակների փորձարկման ժամանակ հայտնաբերված անսարքություններն անհրաժեշտ է անմիջապես վերացնել (սարքի փոխելը, լծակային փոխադրության ուղղորդումը) և կատարել արգելակների կրկինվող փորձարկում, ստուգելով այն մասը, վոր նորոգման յենթարկվել է: Յեթե բոլոր վագոնները ճիշտ արգելաթողնվեն և արգելակելիս անսարքություններ չլինեն, փորձարկումը համարվում է վերջացրած:

§ 23. Այն կայարաններում, վորոնք դեռևս ողային ցանց չունեն, արգելակներն առանց շոգեքարշի փորձարկելու համար, արգելակների գործողության ցուցված ստուգումը կատարվում է շոգեքարշը մատուցելուց հետո ուղարկելուց առաջ միաժամանակ արգելակները փորձարկելով:



Նկար 20. Արգելակային գլխի մեղի քելք չափումը:

ՌԻԶԵՐԿԵԼՈՒՅ ԸՌԱԶ

§ 24. Կազմի արգելակների փորձարկումը գնաց-
քի շոգեքարշով կատարվում է.

ա) կաղմնու սկզբնական կայարանից դնացքն ուղարկելուց առաջ և շոգեքարշի փոխման կայարաններում.

բ) միջանկյալ կայարաններում վազոնները կցե-
լուց, կամ զատելուց հետո.

գ) բոլոր դեպքերում, յերբ զնացքի կազմում
զատվում են միացման բազուկները.

դ) յերբ գնացքը կայարաններում կանգ է առնում 20 բողբոջից ազկել.


յե) յերկարատև վայրելքներին առաջ կայարաններում, շրջանց թվարկը սահմանում են յերկաթուղիների պետերը:

§ 25. Արգելակաների փորձարկումը կատարում է
 շննիշն իրեն յենթարկված փականադործ ավտոմատ-
 իկներին հետ միասին, իսկ զննիշները հունեցող կայա-
 աններում — յուղիչը:

§ 26. Նրանից հետո, յերբ շոգեքարը կցված լի-
ն գոնյա մեկ մոտքարով, կամ ավտոկցման զլխիկ-
երի կցելուց հետո, փականագործ ավտոմատչիկը
խացնում է ռետինե բազուկները վազոնի և տենդերի
իջև: Մինչև բազուկները մխացնելն անհրաժեշտ է
ողմահարել շոգեքարը և տենդերի ողանցույց խողո-
ակը, մի քանի անգամ արագ բանալով տենդերի
այրի ծորակի խցանը (նկար 21):

§ 27. Բազումները միացնելուց հետո բանալ յերկու ծայրի ծորակները սկզբում տեղերի, հետո վազոնի և սպասել, մինչև ամբողջ զնաքի արգելակային ցանցը կլցվի: ճնշած ոգով մինչև 5 մթնոլորտի նորմալ ճնշումը:

§ 28. Արգելակներով փորձարկման համար զննելիք
մեքենավարին տալիս է ազդանշան զնաացքն արգելա-



Նկ. 21. Ողակալի խողովակի հողմահարումը:

կել ցերեկը ձեռքը դիտել վրայով բարձրացնելով և դի-
շերը—թափանցիկ—սպիտակ ապակիյով լապտերը
բարձրացնելով: Մեքենավարից պատասխանի ազդա-
նշան ստանալուց հետո (սեկ կարճ սոււրոց), վոր դը-
նշան ստանալուց հետո, ստուգել, կարգեակովի արդ-
յոք վերջին վագոնը: Համոզվելով, վոր պոչի վագոնը
արգելակված է, մեքենավարին ազդանշան տալ արգե-
լակներն առձակելու ցերեկը—եր ձեռքն առջից մի

կողմից մյուս կողմը թափահարելով, իսկ զելները—
թափանցիկ—սպիտակ ապակիով լապտերը թափահա-
րելով: Պատասխանի ազդանշան ստանալով (յերկու
կարճ սուլոց), վոր արգելակներն արձակված են, զըն-
նիչը ստուգում է, հեռացման արդյոք կոճղերը վերջին
վագոնի անիվներին: Յեթե պոչի վագոնի արգելակն
արձակեց, արգելակների փորձարկումը համարվում է
վերջացրած: Հակառակ դեպքում զննիչը պարզում է
չարձակման պատճառը, վերացնում է այն և կրկնում
է փորձարկումը:

§ 29. Արգելակները ուղարկման սկզբնական կա-
յարանում և շոգեքարշի փոխման կայարաններում
փորձարկելուց հետո, զննիչը մեքենավարին հաղորդում
է սռնիների ընդհանուր քանակը գնացքում, գործող
արգելակների քանակը և արգելակային սռնիների քա-
նակը գնացքում: Բացի դրանից զննիչը հայտնում է
վագոնների ավագ զննիչին, վոր արգելակների փոր-
ձարկումը վերջացրած է և արգելակները սարքին են
գործում:

§ 30. Գնացքի յուղիչը ներկայ է լինում արգե-
լակների գործողության սարքենությունը ղեկավար-
կելու:

3. ՃՆՆԵՊԵՐՇԻՆ ԸՆԹՈՆԵԼԻՍ ՅԵՎ ՄԻՋՆԵՑՆԵԼ՝ ՆԵ-
ՑԵՐՆՆԵՐՈՒՄ ՁՈՒԵ ԸՐՁՆԵՐԻ ՅԵՎ ՎԵՐՈՆՆԵՐԻ ՋՈՑ-
ՄԱՆ ՅԵՎ ԿՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԸՐԳԵԼԿՆԵՐԻՆ ՀՍԿԵԼԸ

Արգելակները հսկողությունը և ընթացման ճա-
նապարհին ու միջանկյալ կայարաններում նրանց
պահման պատասխանատվությունը դրվում է գնացքի
յուղիչի վրա, վորը պարտավոր է:

§ 31. Գնացքի ընթացման ժամանակ հետևի ար-
գելակների սարքին գործողությանը: Արգելակները
աշխատանքում հայտնաբերված անսարքությունները
վերացնել մոտակա կայարանում: Յեթե ընթացման
ճանապարհին արգելակի անսարքությունը անկարելի
լինի վերացնել, այդ դեպքում յուղիչը պետք է նրան
անջատե, այդ մասին հայտնելով մեքենավարին և զը-
ննիչին կոնդուկտորին, իսկ տեխնիկական ղնություն
մոտակա կայարանում պահանջել զննիչներից սարքի
բերելու:

§ 32. Բացթողի կափարիչի մետաղալարով (по-
водок) արգելվում է արձակել գնացքի չարգելակված
վագոնները:


Առանց շոգեքարշից ազդանշան տալու (յերկու
սուլոց) արգելվում է արգելակներին արձակել ընթաց-
ման ճանապարհին: Բացառություն կազմում են ա-
ռածին վագոնների բացարձակ ինքնատրգելակումները,
վորը վորոշվում է կոճղերի շփմամբ, այն ժամանակ,
յերբ քնացած վագոնների արգելակներն արձակված են:

§ 33. Ապրանքատար, կամ մարդատար գնացքի
հետ ընթանալիս, յեթե արգելակված վագոնում ան-
կարելի է արձակումը բացթողի կափարիչի միջով,
հարկավոր է, գնացքը կանգնեցնել մոտակա տափարա-
կի կամ թեքվածքի վրա, բանալով ստոպ-ծորակը և
նրան բացած պահելով մինչև գնացքի կանգ առնելը
(նկար 22):

Վերելքում այդպեսի դեպքերում գնացքը կանգ-
նեցնելն արգելվում է:

Ստոպ-ծորակով գնացքը պետք է կանգնեցնել
միայն այն դեպքում, յեթե ինքնատրգելակումն առաջ

և բերում բանդաժների չափազանց ջնոացում կամ անիմների սահումն:



Նկ. 22. Ստոպ-ծորակը բաց դրուլթյամբ:

Գնացքի խառն արգելակումով ընթանալիս—այսինքն գլխի մասն ավտոմատիկ, իսկ պոչի մասը ձեռքի արգելակումով,—գնացքի կանգառման համար հարկավոր է տալ մեքենավարին կանգառման ազդանշան: Խառն արգելակումով ընթացող գնացքը ստոպ-ծորակով կանգնեցնելն արգելվում է կտրումից խուսափելու համար:

Գնացքը կանգնեցնելուց հետո վագոնի արգելակը, վորի անսարքության պատճառով գնացքը կանգնեցրվել է, պետք է անջատվի և սղը նրա միջից արձակվի:

§ 34. Յեթե ընթացման ճանապարհին մեքենավարը հայտնի, վոր շոգեքարշի վրա ավտոմատիկ արգելակը փչացել է և գնացքը կարող է առաջ ընթանալ միայն ձեռքի արգելակներով, պետք է փակել անաշին վագոնի և տենգերի ծայրի ծորակը, անջատել միացնող բազուկները, կախել նրանց կախոցի, կամ խլարարի վրա և ողը բաց թողնել ողանցույց խողովակից ծայրի ծորակի միջով, իսկ բոլոր վագոնների պաշարի ռեզերվուարները—բացթողի կափարիչների միջով:

§ 35. Միջանկյալ կայարանում ավտոմատիկ արգելակով վագոններ կցելիս անհրաժեշտ է զննել վագոնի արգելակային սարքավորումը և վերացնել հայտնաբերված անսարքությունները: Այն դեպքում, յերբ անհնարին է վերացնել արգելակի անսարքությունը, վորի հետ վագոնը չի կարող ընթանալ, հայտնել գլխավոր կոնդուկտորին այդպիսի վագոնի դատման մասին:

§ 36. Ապրանքատար գնացքներում, յերբ անհրաժեշտ է լինում ընթանալ ձեռքի արգելակումով յուղիչները սպտոսարկում են ձեռքի արգելակները կոնդուկտորական բրիգադի հետ հավասար:

§ 37. Գնացքի ավտոմատիկ արգելակներով ընթանալիս շոգեքարշից արգելակման ազդանշաններ տալիս (կրկնվող յերեք սուլոցներ) անմիջապես բանալ արգելակային ստոպ-ծորակը և արգելակել ձեռքի արգելակը (նկար 22): Նույնպիսի միջոցներ գնացքի արագ կերպով կանգնեցնելու համար ձեռք առնել և արագ կերպով կանգնեցնելու համար ձեռք առնել և այլն հրդեհի, մարդկանց հետ գոթախտությունների և այլն դիպքերում:

§ 38. Ծայրի կայարանը ժամանելուց հետո յուղիչը պարտավոր է հայտնել վագոնների զննիչին արգելակների դրության, ճանապարհին բոլոր անսարքությունների և դեպքերի մասին, իսկ մարդատար գնացքներում բացի դրանից՝ դրանցել նորոգության դրուժմ։ Գնացքի պետը ճանապարհին արգելակների անսարք գործողության բոլոր դեպքերի մասին զեկուցում է վագոնային մասի պետին։

4. ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱԳՔԻ ՅՈՒՆԻՍՏՐԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԺԱՐՈՐ ԿԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ԺԱՐՄԱՆԵԼՈՒՄԸ ՀԵՏՈ

§ 39. Վագոնների զննիչները պետք է ժամանող գնացքը հանդիպեն ընթանալու ժամանակ։

Գնացքի կանգառնելուց հետո վագոնների զննիչը պարտավոր է մեքենավարից տեղեկանալ արգելակների դործողության մասին և արգելակների դրության մասին հայտարարություն ընդունելով յուղիչից, անմիջապես ձեռնամուխ լինել գնացքի արգելակների փորձարկմանը։

Գնացքի արգելակների փորձարկումը նրա ծայրի կայարանը ժամանելուց հետո, կատարվում է վագոնների զննիչի կողմից գնացքի յուղիչի հետ միասին գնացքը կազմելուց հետո փորձարկման կանոնների համաձայն (տես հատված I, §§ 17—22)։

Արգելակների բոլոր թերությունները և անսարքությունները, վորոնց մասին հայտարարել է յուղիչը և մեքենավարը և վորոնք հայտնաբերված են արգելակների զննության և փորձի ժամանակ, վագոնների զննիչը վերացնում է, բաժանելով աշխատանքի փա-

կանագործների միջև, վորոնք նշանակված են նրան օգնելու համար։

§ 40. Այն վագոնները, վորոնց արգելակային սարքավորման անկանոնությունները ժամանման գրծերում չեն կարող վերացվել, պետք է նշանակվեն նորոգման զատելով։

5. ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՍԵՐՎՈՎՈՐՄԱՆ ՓՈԽՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԴԵ

Վագոնների զննիչը, յուղիչը և գնացքի պետը պարտավոր են հետևել արգելակային սարքավորման մասերի ապահով պահմանը և մասնավանդ ուստիսե միացնող բաղուկներին և միջնադիրային ողակների պահպանմանը։

§ 41. Բաղուկներն անջատելիս թույլ չտալ, վոր պետի միջնադիրային ողակները կորչեն։

§ 42. Կազմը յուղիչին փոխադրելիս վագոնների զննիչը պարտավոր է ՎԴ-8 ձևի տեղեկանքի մեջ նշանակել արգելակային սարքավորման բացակայող մասերը։ Յերը գնացքի յուղիչը բացակայում է. ՎԴ-8 ձևի տեղեկանքը տրվում է զլխավոր կոնդուկտորին։

§ 43. Արգելակային սարքավորման պահպանման հսկողությունը ընթացման ուղիում զրվում է յուղիչի վրա, վորը փոխման կետը ժամանելուց հետո պարտավոր է հանձնել կազմի արգելակային սարքավորմանը, իսկ զննիչները պարտավոր են ընդունել ՎԴ-8 ձևի տեղեկանքի համաձայն։

§ 44. Արգելակային սարքավորման մասերի պահպանու զեպում, վորը հայտնաբերվի կազմը զննիչ-

ներին փոխադրելու ժամանակ, վերջինները պարտա-
վոր են ակտ կազմել և ուղղել նրան վագոնային մա-
սի պետին քննելու և մեղավորներին պատասխանա-
տվության յենթարկելու համար:

6. ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՁՆՆԵԼ ԴՆՁՅՔԻ ԱՎԱՐԻՆՑԻՑ ՀԵՏՈ

§ 45. Ավարիայի պատճառները պարզելու համար
գնացքի յուղիչը գլխավոր կոնդուկտորի հետ միասին
ավարիայից անմիջապես հետո պարտավոր ե իսկույն
պարզել արգելակները դրությունը և գրել հետևյալը.

ա) կամ արդյոք ճնշված ոգ վագոնների պաշարի
և լրացուցիչ ռեզերվուարներում, վորը վորոշվում է
բացթողի կափարիչների միջով փորձելու միջոցով.

բ) կամ արդյոք ոգ գնացքի մադիստրալում, վորը
վորոշվում է վերջին վագոնի ծայրի ծորակի բանալով:

գ) ինչպիսի դրության մեջ են գտնվում վագոն-
ների արգելակային կոճղերը—արձակված են, թե սեղ-
մված, ինչպես նաև կոճղերի ջեռացման աստիճանը
(վորոշել շոշափելով):

Վագոնային տնտեսության կենտրոնական
կառավարչության գլխավոր ճարտարապետ՝
ԱԿՍՅՈՆՈՎ

Արտոարգելակների սեկտորի պետ՝
ԳՐԻՇՏԵՅԷ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**ԱՎՏՈՄԱՏԻԿ ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ, ՅԵՌԱԿԻ
ԿԱՓԱՐԻՉՆԵՐԻ ՅԵՎ ՈՂԱՐԱՇԽԻՉՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ ԽՍՀՄ
ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎՐԱ**

1. Վերստինհաուզի սիստեմի մարդատար արգելակ:
Արագ գործող յեռակի կախարիչ


Արագ գործող յեռակի կաֆարիչը (նկ. 23) գործադրվում է մարդատար վագոնների վրա: Սարքերի դասավորությունը վագոնը Վերստինհաուզի արգելակով սարքավորելու դեպքում բերված է նկար 24-ում:

Ամեն մի արգելակավոր, կամ միջանցիկ վագոնի տակ անցնում է մատնահափանոց ողացույց խողովակ, վորը կոչվում է մագիստրալ (1):

Վագոնի յուրաքանչյուր ծայրից մագիստրալն ունի ռետինե միացնող լարուկ (5), վորն ունի միացման գլխիկ (բ), վորի մեջ գտնվում է ռետինե ողակ:


Յուրաքանչյուր արգելակավոր վագոնը մագիստրալի յերկու ծայրերից ունի ծայրի ծորակներ (4), վորոնք ծառայում են մագիստրալը զնացքի վերջում փակել, բանալու համար և զնացքի մի մասը մյուսից անջատելու ժամանակ: Փակ դրությամբ ծորակի բռնակը գրվում է խողովակի լայնությամբ դեպի վեր, իսկ բաց դրությամբ նրա յերկարությամբ: Միջանցիկ վագոններում մագիստրալը ծայրի ծորակներ չունի:

Արգելակավոր վազոնի տակ մագիստրալն ունի արաուդումն (3), վորը փոշեպարկի միջով խանգարում է ցեխի անցնելուց յեռակի կափարիչի մեջ: Արտուդումն մագիստրալը միացնում է արգելակային ապարաթի հետ, վորը բաղկացած է ա) յեռակի կափարիչից (7), վորը կատարում է լիցք, արգելակումն է արձակում, բ) ճնշած ոդի համար պաշարի ռեզերվումաբից (9), վորն անհրաժեշտ է արգելակելիս և գ) արգելակային զլանից (8), վորը հանդիսանում է իբրեւ արգելակային ուշի աղբյուր, վորը փոխադրվում է արգելակային կոճղերին վազոնների լծակային փոխադրության միջոցով:



Նկ. 23. Արագ գործող յեռակի կափարիչ:

Պաշարի ռեզերվումարի, կամ նրա խողովակի վրա տեղավորված է բացթողի կափարիչը (10), վորի ոգնությամբ կարելի է տվյալ վազոնի արգելակն ար-



Նկ. 24. Մարդատար վազոնի վրա Վեստինհուզի արգելակի դասավորության սխեման:

ձակել, յերբ այդ պահանջվում է: Բացթողի կափարիչից անց է կացրած մետաղալար (ПОВОДОК), վազոնի

դրանց նրա յերկու կողմերից, իսկ մարդատար վազոններին վրա մետաղալարի արտադրումն դուրս և բերված նաև վազոնի ներսը: Յուրաքանչյուր արգելակավոր վազոնում կա ստուպ-ծորակ (12), վորը ծառայում և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում զնաքքը կանգնեցնելու համար (որինակ, ուղևորից դուրս դալը, հրգենը, մարդու ընկնելը, քելքի մասերի ջարդվածք և այլն):

Նորմալ ժամանակ այդ ծորակը պետք և փակ լինի, իսկ նրա բռնակը պետք և կանգնե խողովակի յերկարությամբ և պլոմբած լինի: Փափուկ վազոններում ծորակի կոթը գտնվում և հորիզոնական դրությամբ վազոնի պատերի յերկարությամբ բռնի վրա, իսկ ինքը ծորակը դասավորված և վազոնի տակ:

Ստուպ-ծորակները դրվում են մարդատար վազոններում յերեքից վոչ պակաս—մեկ-մեկ հատ տարբերներում և վազոնի ներսը, բազաժային վազոններում—յերկուսից վոչ պակաս և պոստատար—մեկից վոչ պակաս վազոնի ներսը: Ապրանքատար վազոններում ստուպ-ծորակը դրվում և արգելակային սրահակներին վրա:


2. Ունիվերսալ կերպով կատարելագործված յեռակի կափարիչով վեատիննաուզի ապրանքա-մարդատար արգելակը

Ունիվերսալ կերպով կատարելագործված յեռակի կափարիչը (նկար 25) գործադրվում և զուգաջերմային վազոններում, վորոնք շրջագայում են մարդատար և ապրանքատար զնաքքներում:

Կափարիչն ունի զնգաձև կամերա (1), ուժեղմա-

յին խցան (2), բռնակով (3), վորն ունի յերկու դուրս-թյուն:

1) «Ապրանքատար ուժեղմա»—բռնակը թեքված և արգելակային գլանի կողմը «Տ» տառի վրա. դրվում



Նկ. 25. Ունիվերսալ կերպով կատարելագործված յեռակի կափարիչ:

և, յերբ վազոնն ընթանում և ապրանքատար զնաքքում.

2) «Մարդատար ուժեղմա»—բռնակը արգելակային գլանից մյուս կողմն և թեքված «Պ» տառի վրա. դրվում և, յերբ վազոնն ընթանում և մարդատար զնաքքին հետ:

Մարդատար ուժեղմաի ժամանակ արգելակային գլանն արգելակելիս արագ և լցվում, իսկ ապրանքատար ուժեղմաի ժամանակ՝ դանդաղ:


Արգելակային սարքավորման դասավորությունը

նույնպիսի յե, ինչպես նաև վնասված հառուղի արագ գործող յեռակի կափարիչի գեղքում:

3. Կազանցելի սխտեմի ապրանքատար արգելակ— «Ա.Ղ.—1» սերիայի բաշխիչ

«Ա.Ղ.—1» սերիայի ոգաբաշխիչը գրվում է ապրանքատար վազոնների վրա և գլխավորապես ցիտերների վրա (նկար 26):

«Ա.Ղ.—1» սերիայի աշխատանքի առանձնահատկությունը պարունակվում է նրա գործողության լիակատար անսպառության մեջ, վոր առանձնապես կարեոր է յերկարատև արգելակումների ժամանակ ձեռ-



Նկ. 26. «Ա.Ղ.—1» սերիայի ոգաբաշխիչ:

ձգվող թեքվածքներում: Ոգաբաշխիչն ունի կրկնակի դապանակով կամերա, վորը կարելի յե ուղղորդել ձեվավոր (խղճեբավոր) բանալիով, բաշխիչի գլխիկից սեղմակային պտուտների միջոցով հանելով կնդուղը:

Արգելակային սարքավորման դասավորությունը պատկերած է նկար 27-ում:


Ոգաբաշխիչը (4) միջանկյալ մասով դրվում են արգելակային գլանի խուփի պոռնկի վրա (5): Անջատող ձորակը (3) գտնվում է մագնիստրալից (1) արտուղող խողովակի (2) վրա: Բացթողի կափարիչ (6) — միջանկյալ մասի վրա: Բացթողի կափարիչից անց է կացրած մետաղալար (ПОВОДОК) (7) վազոնի յերկու կողմերից: Արգելակային գլանի խուփի պոռնկից կողքի կողմից մոտենում է պաշարի ռեզերվուարի փողիկը (8):

4. «Կ» սերիայի բաշխիչով կազանցելի արգելակը

«Կ» սերիայի ոգաբաշխիչը գործողություն է ապրանքատար վազոնների վրա:

«Կ» սերիայի ոգաբաշխիչը (նկար 28) նույնպես, ինչպես և «Ա.Ղ.—1» սերիայինը, հանդիսանում է վորպես աստիճանավոր արգելակումով և արձակումով բաշխիչ, այսինքն ձգձգվող թեքվածքներում յերկար ապրանքատար դնացքների արգելակման համար պտտանի: Ոգաբաշխիչը չե պահանջում խստով վորոշ լիցքային ձնչում մագնիստրալում:

Դնացքի արգելակները լցնելիս արգելակում չե ստացվում: Արգելակի անսպառությունը ապահովված է, պակաս չափով, քան «Ա.Ղ.—1» սերիայի բաշխիչինը և կախված է ոգաբաշխիչի լրացուցիչ ռեզերվուարի հետ միացման խտությունից և բացթողի կափարիչի հետ միացման խտությունից և բացթողի կափարիչի քիփ կաշեկուց, վորը գտնվում է լրացուցիչ ռեզերվուարի վրա: Դրան պես և խստորեն հետևել հակա-




Նկ. 27. Վազմի սարքավորումը «Ա»-1» սերիայի ոգաբաշխիչով:

առկ դեպքում արգելախմբան ժամանակ արգելակը կա-
րող և ազատակամ կերպով արձակվել:

Ոգաբաշխիչը (նկար 29) (1) միացվում է $1/2$ մատ-
նաչափանոց ծորակով (3) արտոդման վրա (2):

Բացթողի կափարիչը (5) ղրված է լրացուցի




Նկ. 28. «Կ» սերիայի ոգաբաշխիչ:

ռեզերվուարի (4) վրա և վազմի յերկու կողմերից ու-
նի մետաղալար (ПОВОДОК) (6) անհրաժեշտութեան
դեպքում արգելակին արձակելու համար:

5. Մատրոսովի սխեմայի տիպային ապրանքատար-
արգելակ—«Մ» սերիայի բաշխիչ:

Մատրոսովի սխեմայի ապրանքատար տիպի ար-
գելակը բնութագրված է, վորպես տիպային ԽՍՀՄ-ի վա-
զմների մեծողջ ապրանքատար պարկի սարքավոր-
ման համար:


Ոգաբաշխիչը (նկար 30) հանդիսանում է, վոր-
պես ստանդարտային արգելակային գլանների առկ
տրամագծի համար: Մատրոսովի արգելակը նույնպես,
ինչպես նաև կազանցելի արգելակը, հանդիսանում է



Նկ. 29. Վաղահի սարքավորումը «Վ» սերիայի ուղաբաշխիով:


աղբաճատար տիպի արգելակ, անսպառ և աստիճանավոր արգելակում ու արձակում ունեցող: Աշխատող կամերայի խտության անսպառութիւնը կախված և բացթողի կափարիչից, վորը գտնվում և աշխատող կամերայի վրա:

Մատրոսովի արգելակի հիմնական տարրերով թյունն ուրիշ սխեմայի արգելակներից պարունակվում և արգելակելիս արգելակային գլանի լցնելու ժամանակի մշականության մեջ, անկախ արգելակային



Նկ. 30. «Մ» սերիայի ուղաբաշխի:

գլանի մխոցի քելքի տրամագծից, Բացի դրանից ուղաբաշխիչը հնարավորութիւն և տալիս փոխելու ոգի



Նկ. 31. Վազոնի սարքավորումը (Մ՝ սեբեկի ողորդարկիչով)

ճնշումը արգելակային գլանում դատարկ և բեռնած վազոնների համար սարքի իրանում ռեժիմային նեցուկի պատելու միջոցով:

Տարբերվող նշանները (նկար 31), ողորդարկիչը (1) աշխատող կամերայի (2) հետ գլորելու բարձակի հետ (3) մեասին ամբարացած և վազոնի շվեկների վրա,

կամ լայնքի շրջանակային գլանի վրա և նրան ամրացրած և յերեք բոլորով աշխատող կամերայի թաթերի միջով, Բացթողի կափարիչը (4) դրված և աշխատող կամերայի վրա: Անջատող $\frac{1}{3}$ մատնաչափանոց ծորակը (5) — մագիստրալային խողովակի արտուղման վրա:

Աշխատող կամերայի պոռնկից գնում են յերեք խողովակներ. դեպի մագիստրալը $\frac{1}{3}$ մատնաչափանոց, արգելակային գլանը՝ $\frac{3}{4}$ մատնաչափանոց և պաշարի ռեզերվուարը $\frac{1}{3}$ մատնաչափանոց: Ռեժիմային նեցուկը (6) «դատարկ ռեժիմի» ժամանակ յետ և շրտած և իրանից 15 միլիմետրով դուրս և գալիս, իսկ «բեռնված ռեժիմի» ժամանակ սարքի կնգուղի հետ հավասար ներս և մտցրած:

ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՆԵԼԸ ՁՆՆՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ՅԵՎ ԳՆԱՑՔԻ ԸՆԹԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐԶԻՆ

§ 1. Ողային բազուկների գլխիկներում կորուստ-
ները վերացնելը.

ա) փակել, բանալ կից վազոնների յերկու ծայրի
ծորակները.

բ) անջատելով բազուկները, զննել միջնագերային
ռետինն ողակները.

գ) ճխլած ողակները ուղղել, իսկ անպեռքները
փոխել.

դ) բազուկները միացնելով համողվել, վոր կո-
րուստը վերացրված է:

§ 2. Ծայրի ծորակներում կորուստների վե-
րացնել.

ա) համողվել, վոր ծորակի բռնակի քառակուսու
վրա ուղղահայաց գիծը (ռիսկա) կանոնավոր գրության
մեջ է.

բ) մի քանի անգամ բանալ և փակել ծորակը.
յեթե կորուստը չի վերացվում, պետք է ծորակը փո-
խել.

գ) ծորակը փոխելիս բազուկը հանել, ծորակը
դնել վռչի, կամ լավ կանսիի փաթթանով, քրշանի,
կամ սուսրի մեջ թաթախած, ծորակը պտտելու ժամա-

նակ նրան տալ կանոնավոր գրության և ամրացնել
փաթաթանով հակապտուտակով:

§ 3. Ողանցույց խողովակի միացումներում կո-
րուստը վերացնելը.

ա) արձակել միացման հակապտուտակները.

բ) մաքրել հին ներբանը.

գ) մուֆտան 1—2 թելով շարժել և շինել նոր
փաթաթան կանսիից, կամ սուսրով պատրաստած լավ
խծուծից.

դ) ամրացնել հակապտուտներ և ստուգել կո-
րուստը:

§ 4. Բաշխիչի գլորելու պոռնկի կորուստի վե-
րացնելը.

ա) ամրացնել ողաբաշխիչի գլորելու պոռնկի
պտուտմեքները.

բ) յեթե կորուստները չնդհատվեն, այդ դեպքում
հանելով ողաբաշխիչը, զննել կաշվե միջնագերը և նրա
ֆլասավելու դեպքում փոխել:

§ 5. Արձակման կափարիչի կորուստների հե-
ռացնելը.

ա) մի քանի անգամ հողմահարել կափարիչը ձգե-
լով մետաղալարը (ПОВОДОК).

բ) յեթե կորուստը չի ընդհատվում փոխել ան-
սարք կափարիչը.

գ) շտուցների ռեզբայի վրա փաթաթան շինելով
ամրացնել այն և ստուգել կորուստը:

§ 6. Ռետինն միացնող բազուկների փոխելը.

Յեթե բազուկը պայթել է, կամ ող է անցկաց-
նում խողովակի գլխիկի հետ կամ ծայրոցի հետ միա-
ցումներում, այդ դեպքում հարկավոր է.

ա) արձակել հակապատուամերը.

բ) յետ պատել բազուկը, պտուտակել նոր բազուկը, տալով նրան կանոնավոր դրություն.

գ) ռեզրայի վրա ներքան շինելով, ամրացնել հակապատուամերը և ստուգել կորուստը:

§ 7. Արագ գործող յեռակի կափարիչի անսարքությունների վերացնելը.

ա) սարքին յեռակի կափարիչը դնելուց առաջ զննել և մաքրել կաշվե միջնադեբը, հողմահարել մագիստրալը, համոզվել, վոր յեռակի կափարիչի մագիստրալային ռստեկում ցանց կա, կափարիչը դնել բեվեռների վրա և ամրացնել պտուտամերները.

բ) զննել միջնադեբային ողակը, իր տեղը դնել և ամրացնել մոգիստրալի արտուղման խողովակի ծայրոցի պտուտամերը. ստուգել միացումների խտությունը և յեռակի կափարիչի աշխատանքը.

գ) յեռակի կափարիչի ազատակամ արձակումը. մեկ-յերկու անգամ արգելաթող անել, զզնել չէն անցկացնում արդյոք բացթողի կափարիչը և խողովակի միացումը պաշարի ռեզերվուարին. յեթե յեռակի կափարիչը շարունակում է արձակել— զննման կետում փոխել յեռակի կափարիչը.

դ) յեթե արգելակները արձակված դրությամբ լցնելիս նկատվում է ողի դուրս գալը յեռակի կափարիչի մանուրտային անցքի մեջ, այդ դեպքում վերակցման խցանի բռնակը պետք է դնել հորիզոնական ուղղությամբ և յեթե այդ դեպքում բացթողնելն ընդհատվի, դա նշանակում է, վոր միջին կափարիչի կաշվե ողակը յերազիչի մեջ ողն անց է կացնում: Վագոնը բաց թողնել անջատած յերազիչով:

Յեթե անջատած յերազիչի ժամանակ ողի բացթողնելը չե ընդհատվում, դա նշան է, վոր սողնակը կամ պուռնկի միջնադեբը անսարքին են: Այդ դեպքում, պետք է յերազիչը միացնել և մեկ-յերկու անգամ արտակարգ արգելակումով արգելակել և յեթե ողի բաց թողնելը չնդհատվի, կափարիչն անջատել և փոխել զննման կետում.

ե) յեռակի կափարիչը, վորը առաջ է բերում ազատակամ արգելակումն, պետք է մի քանի անգամ արգելակել և արձակել: Յեթե դրանից հետո ինքնաարգելակումը չնդհատվի— անջատել և զննման կետում փոխել:

§ 8. Ունիվերսալ կերպով կատարելագործված յեռակի կափարիչի անսարքությունը:

Այդ յեռակի կափարիչի անսարքությունը նույնպես պարունակվում է ազատակամ արգելակումներում և արձակման մեջ մեկնույն պատճառներով, ինչպես և արագ գործող յեռակի կափարիչի մոտ:

Զննման կետում փոխել անսարք կափարիչը:

§ 9. Կազանցեմի արգելակի «ԱՊ—1» սերիայի ողաբաշխիչի անսարքությունները:

Յեթե մագիստրալի 5 մթնոլորտի լցված ճնշման ժամանակ սարքը չի արձակում, այլ պահանջում է ավելի ճնշում արձակման համար, կամ ընդհակառակը, արձակումը ստացվում է 5 մթնոլորտի լիցքային ճնշում կազմվելուց առաջ, այդ դեպքում այդպիսի բաշխիչն անջատել և զննման կետում փոխել, կամ ուղղորդել զսպանակները: Սարքին պարագան դնելուց առաջ պետք է զննել գլորելու պուռնկի կաշվե միջնադեբի դրությունը, համոզվել, վոր սարքի մագիս-

տրալային ուստիկում ցանց կա: Ողաբաշխիչը, վորը արգելակում է և «փչում» է մթնոլորտային անցքում, պետք է անջատել և ղնման կետում փոխել:

§ 10. Կազանցելի արգելակի «Կ» սերիայի ողաբաշխիչի անսարքությունը:

ա) Լրացուցիչ ռեգերվուարը չէ լցնվում:

Յեթե բաց անջատող ծորակի ժամանակ բանալ լրացուցիչ ռեգերվուարի վրայի բացթողի կափարիչը և նրանից ողը չգնա, ապա այդպիսի բաշխիչը պետք է անջատել և փոխել այն ղնման կետում:

բ) Բաշխիչը չէ արձակում:

Արձակումը պետք է տեղի ունենա, յեթե ողը թողնել լրացուցիչ ռեգերվուարի վրայի բացթողի կափարիչով: Յեթե արձակում տեղի չունենա, այդ դեպքում բաշխիչը պետք է անջատել և փոխել ղնման կետում: Ողաբաշխիչը փոխելիս ղննել զլորվելու պըռուռների կաշվե միջնադիրը, մաքրող ցանցը, ողաբաշխիչը ղննել բենռների վրա, ամրացնել պտուտամերները, փողիկները միացնել ողաբաշխիչի հետ և ամրացնել միացնող պտուտամերը: Ստուգել ողաբաշխիչի աշխատանքը:

գ) Բաշխիչը չէ արգելակում, կամ ազատակամ կերպով արձակում է:

Պետք է ստուգել լրացուցիչ ռեգերվուարը արդյոք ողով լցված է և ողի կորուստներ չկան արդյոք ղեպի լրացուցիչ ռեգերվուարը միացումներում և բացթողի կափարիչում: (կորուստների ժամանակ կլինի ազատակամ արձակում): Կորուստները լրացուցիչ ռեգերվուարում պետք է վերացնեն սալնելով ստուգմամբ (փամփուշտի յերեալը ցույց կտա ողի կորուս-

տը): Ռեգբայի վրայի միացումներում կորուստները վերացնել քրշանով կամ սուսրով ծեփած փաթաթանով:

Յեթե ողաբաշխիչը չէ արձակում, կամ չէ արգելակում, այդ դեպքում նրան պետք է անջատել, իսկ ղնման կետում փոխել:

դ) Ողաբաշխիչը ազատակամ կերպով արգելակում է:

Պատճառը հանգիստանում է անջրպետի (диафрагма) պատռվելը: Ողաբաշխիչը պետք է անջատել, իսկ ղնման կետում փոխել:

Յեռակի կափարիչները և «ԱՊ—1» և «Կ» սերիայի ողաբաշխիչները փոխելիս ստուգել արգելակային զլանի տրամադծին նրանց համապատասխան լինելը, այդ վորոշելով պուռնկի գուռավորմամբ, մթնոլորտային անցքի խցանի վրայի և իրանի վրայի դրոշմներով ղեկավարվելով այս աղյուսակով:

Դլանի արամազծի համար (մասնաշափեր)	Յեռակի կափարիչի, կամ ԱՊ-ի ողաբաշխիչի բացթողի անցքի խցանի վրայի դրոշմը	«Կ» ողաբաշխիչի իրանի վրայի դրոշմը	Պուռնկի գուռավորումը
8	8	8	Դեղին
10	10	10	Սև
12	12	12	Կարմիր
14	14	14	Կանաչ

§ 11. Մատրոսովի սիստեմի «Մ» սերիայի ողաբաշխիչի անսարքությունները:

ա) Ողաբաշխիչի միացնելը պետք է տեղի ունենա մագիստրալի արտուղման վրայի անջատող ծորակի դանդաղ բանալով, հակառակ դեպքում ողաբաշխիչը կարող է «փչել» մթնոլորտային անցքում. յեթե դա առաջ գա, այդ դեպքում պետք է անջատող ծորակը փակել-բանալ և ողբ բացթողի կափարիչի միջով բաց թողնելով, նորից այն բանալ: Յեթե փչոցը ընդհատվի, այդ դեպքում հարկավոր է վազոնը խիստ արգելակել նրա ծայրի ծորակներից մեկի միջով: Յեթե արգելակելուց հետո ողաբաշխիչը «փչում է», այդ դեպքում հարկավոր է նրան անջատել և ողբ բաց թողնել աշխատող կամերայից: Զննման կետում ողաբաշխիչը փոխել:

բ) Ողաբաշխիչը չեն արգելակում:

Բացթողի կափարիչի միջոցով համոզվել լցվել է արդյոք աշխատող կամերան: Յեթե կամերան չի լրացվում, հարկավոր է ողաբաշխիչն անջատել և զննման առաջին կետում փոխել: Նոր բաշխիչ դնելիս հետևել պոռնկի կաշվե միջնադիրի մաքրությանը և մագիստրալային փողակտորում դանցի առկայությանը և նրա մաքրությանը:

Բաշխիչը դնելուց առաջ պետք է փչել մագիստրալային արտուղումը բանալով նրա վրայի անջատող ծորակը:

Բաշխիչը դնելիս բոլոր պտուտմեքները հերթով խաչաձև պնդացնել, հավասարաչափ սեղմելով:

գ) Ողաբաշխիչը ազատակամ արձակում է:

Համոզվել չկա արդյոք ողբ կորուստ պոռնկի

մեջ աշխատող կամերայի կողմից (ամրացնել սարքի գլորելու պոռնկի պտուտմեքները): Զննել, չկա արդյոք ողբ կորուստ աշխատող կամերայի բացթողի կափարիչում, և յեթե այն չի կարելի վերացնել, այդ դեպքում բացթողի կափարիչը փոխել: Ստուգել, ձգելով խլարարի ամրացման խտությունը:

դ) Ողաբաշխիչը չեն արձակում:

Բացթողի կափարիչի մետաղալարը (ПОВОДОК) յերկու-յերեք անգամ քաշելով, ձգելով արգելակն արձակել:

Յեթե ողբ թողարկումը մթնոլորտային անցքի միջով չեն ստացվում, այդ դեպքում ողաբաշխիչն անջատել: Զննման կետում ողաբաշխիչը փոխել:

Վազոնային տնտեսության կենտրոնական կառավարչության գլխավոր ճարտարապետ՝

ԱԿՍՅՈՆՈՎ

Ավտոարգելակների սեկտորի պետ՝

ԳՐԻՆՏՏԵՅԵ



8 Ա Ն Կ

Ապրանքատար գնացքների լրել ավտոաբեկական փոխադրելու մասին	3
1. Արգելակների գնակը և գործողութայն համար պատրաստելը գնացքը կադմեկուց հետո	19
2. Արգելակների փորձարկումը գնացքն ուղարկելուց տուջ	42
3. Ճանապարհին ընթանալիս և միջանկյալ կայարաններում շոգեքաղճների և վազոնների դատման կցման ժամանակ արգելակներին հակելը	44
4. Արգելակների գնուությունը գնացքի շոգ քաղճի փոխման և ծայրի կայարանը ժամանելուց հետո	48
5. Արգելակային սարքավորման փոխադրութայն կարգը	49
6. Արգելակների գնակը գնացքի ավարիայից հետո	50
Հավելված 1. Ավտոմատիկ արգելակները սխեմները, յեռակի կափարիչների և ողաքաշխիչների տիպերը, իՍՀՄ յերկաթուղիները շարժական կադմի վրա	53
Հավելված 2. Արգելակների թերությունների վերացնելը գնման կետում և գնացքի ընթացման հանապարհին	66

ՀՀ Ազգային գրադարան



NL0296111

2 Г 1

24.451

Н. К. П. С.
ИНСТРУКЦИЯ по АВТОТОРМОЗАМ
осмотрщику вагонов,
поездному смазчику
и
начальнику поезда.

Издание Зак. Жел. Дор.